Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի 2018 թ. դպրոցական օլիմպիադայի
մարզային (քաղաքային) փուլի
(տևողությունը – 150 րոպե)

11 – 12 դասարաններ

1. Բառաշարքից դուրս գրել չորս ավելորդները..... 2 միավոր
   ա / գնչուներ, օսեր, բաղախշանցիներ, ուզբեկներ, թալիշներ, ավարներ, տաջիկներ, հրեաներ
   բ / Մանաուս, Կասաբլանկա, Կիտո, Կարաչի, Կորդովա, Ռեսիֆի, Պերտ, Դիլի
2. Երևան քաղաքում տարվա ընթացքում չափվել են միջին ամսական հետևյալ ջերմաստիճանները՝
   - 4,5 ^{0}, - 1,3 ^{0}, + 5,4 ^{0}, + 11,8 ^{0}, + 17,0 ^{0}, + 21,1 ^{0}, + 25,1 ^{0}, + 24,5 ^{0}, + 20,1 ^{0}, + 13,5 ^{0},
   + 6,2 ^{0}, - 0,9 ^{0}: Որոշել Երևանի տարեկան միջին ջերմաստիճանը և ջերմաստիճանի
   տատանման լայնույթը ..... 2 միավոր
3. Երկրի բնակչության թիվը 20 մլն է, գյուղական բնակչության թիվը՝ 4 մլն: Մեկ տարվա
   ընթացքում ծնվածների թիվը կազմում է 300 000 մարդ:
   ա / Որոշել ուրբանիզացման մակարդակը: բ / Որոշել ծնելիության գործակիցը:……..…2 միավոր
4. Նշված լճային գոգավորությունները դասավորել արևելքից արևմուտք ուղղությամբ..... 1 միավոր
   Բալատոն, Բայկալ, Խանկա, Իսիկ – Կուլ, Օնեգա, Ժնևի, Ուրմիա, Արալ
5. Ի՞նչ ժամանակաշրջանների է բաժանվում պալեոզոյան դարաշրջանը: Ի՞նչ
   ծալքավորություններ են տեղի ունեցել պալեոզոյում: Գրել հնից նորը՝
   ճիշտ հերթականությամբ..... 2 միավոր
6. Աշխարհագրական հետազոտությունների մեթոդների վերաբերյալ տրված պնդումներից
   որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր
   1. Կոնկրետ գիտական մեթոդները կիրառելի են գիտության բոլոր ճյուղերում:
   2. Համեմատական աշխարհագրական մեթոդի էությունն այն է, որ համեմատելով աշխարհագրական տարբեր օբյեկտներ փորձում են բացահայտել դրանց զարգացման ընդհանուր օրինաչափությունները և տարբերությունները:
   3. Նկարագրական մեթոդը գիտական ճանաչողության հնագույն մեթոդներից է:
   4. Աշխարհագրական հետազոտության մեթոդները լինում են մասնավոր աշխարհագրական և համաաշխարհագրական:
   5. Համագիտական մեթոդները կիրառվում են միայն գիտության որոշ ճյուղերում:
   6. Աշխարհագրական հետազոտության մեթոդներից լայն տարածում ունի դաշտային (արշավախմբային) մեթոդը:
7. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ..1,5 միավոր
   1. Մեծ Մասիսից դեպի արևմուտք ձգվում է Հայկական Պար լեռնաշղթան:
   2. Միջնաշխարհի ցածրադիր գոգավորություններում տարածվում է լեռնաանտառային լանդշաֆտը:
   3. Հյուսիսում տարածվում են Ներքին Տավրոսի լեռները:
   4. Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում վեր են խոյանում Արագածը և Գեղամա լեռնավահանը:
   5. Հարավ – արևելքում գտնվում է Սավալան հրաբխային վիթխարի զանգվածը:
   6. Արևելապոնտական լեռների ամենաբարձր գագաթը Ծաղկավետն է:

8. **Տրվածներից ո՞րն է ՄԱԿ – ի հատուկ մասնագիտացված բնապահպանական կազմակերպությունը.....1 միավոր**

1. ՅՈՒՆԵՍԿՈ 2. ՅՈՒՆԻՍԵՖ 3. ՅՈՒՆԵՊ 4. ՅՈՒՆԻԿՏԱԴ

9. **Ո՞ր պնդումն է սխալ..... 1 միավոր**

1. Ցամաքի և օվկիանոսի շփման գոտում ձևավորվել է համաշխարհային օվկիանոսային տնտեսությունը:
2. Համաշխարհային օվկիանոսի աղտոտիչների մեջ գլխավորը նավթը և նավթամթերքներն են:
3. Համաշխարհային օվկիանոսի հիմնախնդիրն ունի զուտ տնտեսական բնույթ:
4. Առավել շատ են աղտոտված Համաշխարհային օվկիանոսի ներքին ծովերը:

10. **Օրգանական նյութեր սինթեզող կենդանի օրգանիզմները կոչվում են..... 1 միավոր**

1. կոնսումենտներ 2. ռեդուցենտներ 3. պրոդուցենտներ 4. պեստիցիդներ

11. **Ի՞նչն ընդհանուր չէ Արարատի և Արմավիրի մարզերի համար..... 1 միավոր**

1. Գերիշխում են կուլտուր – ոռոգելի հողերը:
2. Արդյունաբերության մեջ առաջատար է էլեկտրաէներգետիկան:
3. Բնորոշ են խոշոր գյուղերը:
4. Գյուղատնտեսության զարգացման գլխավոր պայմանն արհեստական ոռոգումն է:

12. **Ճապոնիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր**

1. Տնտեսության զարգացման մակարդակով առաջինն է Արևելյան Ասիայում:
2. Թույլ է ապահովված հումքի և վառելիքի սեփական պաշարներով:
3. Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
4. Ավտոճանապարհային ցանցի համար բնորոշ են արագընթաց լայնահուն մայրուղիները:
5. Բեռնաշրջանառության մեջ մեծ է գետային տրանսպորտի բաժինը:
6. Արտահանման մեջ գերակշռում են մեքենաներն ու սարքավորումները:

13. **Բնական զոնաների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.....1,5 միավոր**

1. Աշխարհագրական գոտին բնական զոնայի մի մասն է:
2. Բառբաբը և շշածառը տարածված են հասարակածային խոնավ, մշտականաչ անտառային զոնայում:
3. Աֆրիկայում բացակայում է տափաստանների բնական զոնան:
4. Սնահողերը մեծ տարածում ունեն Ավստրալիայում:
5. Կաղնին, հաճարենին, բոխին և շագանակենին լայն տարածում ունեն սավանաներում:
6. Ավստրալիայում շատ տարածված են հատկապես անապատների և սավանաների բնական զոնաները:

14. **Գրել այն Ջրէկ – ների համարները, որոնք չեն մտնում Սևան – Հրազդան ջրաէներգետիկ կասկադի մեջ.....1 միավոր**

1. Քանաքեռի 2. Տաթևի 3. Շամբի 4. Զորագետի
5. Սպանդարյանի 6. Արգելի 7. Արզնու 8. Սևանի

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Ա. Թ. Գրիգորյան